

# Շոգովուրդ

126  
(2976)

19 սեպտեմբերի հինգշաբթի 2024  
տպագրության ԺԳ տարի

Է. Երեւան, Արմավյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՉԵՄՊԻՈՆ «ՓՅՈՒՆԻԿԵԸ»-Ը ՀՖՖ ՊԱՏՃԱՌՈՎ ԿԱՐՈՂ Է ՓԱՆԿԵԼ



Երեկ սենսացիոն լուր տարածեց հայկական ամենահեղինակավոր ակումբներից մեկի՝ Հայաստանի գործող չեմպիոն Երեւանի «Փյունիկ»-ի սեփականատեր, գործարար Արթուր Սողոմոնյանը: Նա հայտարարեց, որ դադարեցնում է իր ֆուտբոլային գործունեությունը եւ վաճառքի է հանում թիմը: Իր խոսքում գործարարը մեղադրեց Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարությանը՝ իրեն այդ քայլին դրդելու համար: Բացի ֆուտբոլի ու ՀՀ-ի համար իմիջային ողբերգություն լինելուց, այս իրողությունը նաեւ գալիս է փաստելու, որ գործող իշխանությունը, ի դեմս Նիկոլ Փաշինյանի, տապալում է նաեւ այս ոլորտը:

ՀՖՖ-ն դարձել է ԶՊ-ականների բիզնես միջավայր. մամուլը բազմիցս գրել է, որ այնտեղ ֆինանսական հետաքրքրություններ ունեն Հակոբ Սիմիոյանը, Փաշինյանի աներորդի Յրաջյա Հակոբյանը, ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը, Երեւանի կոռուպցիոներ պաշտոնյայի համբավ ստացած փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանը, եւ հաճախ ՀՖՖ-ի հետ արտասահմանյան գործուղումների մեջ կարելի է տեսնել նաեւ պատգամավոր Սիսակ Գաբրիելյանին ու այլոց: Մամուլում բազմաթիվ հրապարակումներ են եղել, որոնք, մեղմ ասած, փաստել են, որ այս ԶՊ-ականներն են իրականացնում ֆեդերացիայի կողմից պատվիրված շինարարությունները: Վերջին դեպքը «ՆՈԱ» ակումբի միջազգային խաղի ժամանակ Արմավյանի մարզադաշտի հոսանքազրկումն էր, իսկ այդ ենթակառուցվածքի շինարարությունը, ըստ լրագրողական հետաքննության, կապված էր շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիոյանի շրջապատի հետ: Էլ չենք խոսում այն մասին, որ ֆուտբոլի ակադեմիայի սառնան ու լրդավազանը օգտագործվել են ԶՊ-ական հավաքների համար, ինչի մասին գրվել է վաղուց:

Նիկոլ Փաշինյանը շարունակում է պահել իր աջակցությամբ ընտրված Արմեն Մելիքբեկյանին, ում օրոք հայկական ֆուտբոլը հետընթաց է ապրում. բոլոր տարիքային հավաքականները խայտառակ արդյունքներ են գրանցում, իսկ ազգային թիմը կրում է պարտություն պարտության հետեւից. դե իսկ եզակի հաղթանակներն ընկալվում են որպես բացառություն: Այս ընթացքում Փաշինյանը հայտարարում է, որ մեր հավաքականը խոշոր մրցաշարում մեղալակիր է դառնալու: Իհարկե, դառնալու է, բայց ոչ այսպիսի ազահուության, անհայրենասիրության ու ոչ պրոֆեսիոնալ մոտեցման պարագայում: **Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:**


**Տ**եւական ժամանակ է, ինչ Հայաստանում ենթադրյալ հանցագործներն իրենց հանցավոր գործողությունները իրականացնում են ԱԱԾ-ի կամ ոստիկանության կողմից համազգեստներով: Խոսենք փաստերով, այս տարվա ապրիլի 10-ին «Պորո» մակնիշի ավտոմեքենայով հետապնդել են «Հունդայի Սուտատ» մակնիշի ավտոմեքենային, եւ Փարաքար համայնքում մեքենայի դիմացի աջ դռան պատուհանից զենքի գործադրման սպառնալիքով կանգնեցրել են նշված ավտոմեքենան: Հանցագործները ԱԱԾ աշխատակիցների համազգեստին նմանվող համազգեստով են եղել եւ դիմակավորված. դուրս գալով ավտոմեքենայից՝ նրանք ներկայացել են իբրեւ ՀՀ ԱԱԾ աշխատակիցներ ու ավտոմեքենայում գտնվող 3 անձի նկատմամբ զենքի կիրառումով բռնություն գործադրելով՝ նրանց դուրս են բերել ավտոմեքենայից: Այնուհետեւ, թմրամիջոց ու այլ արգելված իրեր փնտրելու եւ նրանց ձերբակալելու պատրվակով վերոնշյալ երեք անձանց ձեռքերին անցկացրել են ձեռնաշղթաներ, ապա ավտոմեքենայից հափշտակելով 36 կգ քաշով 999 հարգի ոսկյա ծուլակտորները եւ 293 մլն ՌԴ ռուբլի գումարի պարունակությամբ պայուսակները՝ փախել: 2024 թ. սեպտեմբերի 4-ին հանցավոր կազմակերպության՝ դեռեւս ինքնությունները չպարզված չորս մասնակից BMW մակնիշի կեղծ համարանիշներով ավտոմեքենայով հետապնդել են ամերիկահայ բիզնեսմենի կնոջը: Ժամը 12:00-ի սահմաններում նրանցից երկուսը, ՀՀ «ԱԱԾ» գրառմամբ հագուստներով եւ դիմակավորված, ներկայանալով որպես ՀՀ ԱԱԾ աշխատակիցներ՝ մոտեցել են Երեւան քաղաքի Աշտարակի խճուղում գործող «Սան Մարկո» լողավազանում իր հարազատների հետ գտնվող կնոջը, եւ ԱԱԾ տեղափոխելու կեղծ պատրվակով, վերջինիս կամքին հակառակ, բռնություն գործադրելով՝ ստիպողաբար նստեցրել են հիշյալ մեքենան ու տեղափոխել Տավուշի մարզի Նոյեմբերյան-Ազատամուտ մայրուղում գտնվող եկեղեցուն կից շինություն: 2024 թվականի հունիսի 11-ին սպանվեց քրեական հեղինակությունը Սերգեյ Գրիգորյանը՝ «Ֆազը», որին սպանողների մեքենայի տարածքում հայտնաբերվել էր ոստիկանության գրահաբանկո:



**Ն**իկոլ Փաշինյանի ժողովրդավարության դարաշրջանում բռնապետական երկրին բնորոշ կերպով քաղաքական հալածանքների են ենթարկվում ոչ միայն «չինազանդվողները» կամ ԶՊ կարծիքը չկիսողները, այլեւ նրանց ազգականները: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է գործընթացի մի ժամանակագրություն, որի հետեւությունները գուգադիպություն դժվար է համարել: Փաստորեն, բացի «Սերժ Սարգսյանի եւ այլոց» դեմ հարուցված դատական գործը քննող դատավոր Վահե Միսակյանից, պատժամիջոցների է արժանացել նաեւ մեղադրող դատախազ Տիգրան Ենոքյանը: Սերժ Սարգսյանի արդարացման վճիռը հրապարակելու ճիշտ նույն օրը՝ 2024 թվականի մայիսի 31-ին, պաշտոնից ազատվել է նրա հարկային տեսչության պետ հայրը՝ Աղվան Ենոքյանը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ վերջինս երկար տարիներ է՝ թռչակառու էր եւ զբաղեցնում էր Արագածոտնի հարկային տեսչության պետի պաշտոնը, իսկ նրա տարիքը ոչ ոքի չէր անհասնատես: Այժմ Աղվան Ենոքյանը իջեցվել է բաժնի պետի տեղակալի հաստիքի: Ինչպես տեսնում եք՝ Ստալինը թեւ մահացած է, բայց ստալինիզմը ողջ է Նիկոլ Փաշինյանի կառուցած ժողովրդավարական երկրում:



**Ա**յսօր լրանում է Արցախի Հանրապետության տոտալ հայաթափման, բռնի տեղահանության, էթնիկ զտման մեկ տարին: 2023 թվականի այս օրը՝ սեպտեմբերի 19-ին, Ադրբեջանի զինված ուժերի կողմից [այնամասշտաբ ռազմական ագրեսիա սկսվեց, ինչի հետեւանքով Արցախի հայ ազգաբնակչությունը էթնիկ զտման ենթարկվեց, եւ շուրջ 120 հազար արցախցի ստիպված լքեց իր հայրենիքը՝ տարիներով պահած իրենց ապրուստը թողնելով թշնամուն: Իսկ ի՞նչ իրավիճակ է Արցախի նկատմամբ հարձակույթից մեկ տարի անց. ադրբեջանական զեռության մեջ գտնվող Արցախ, ապօրինի կալանավորված ռազմաքաղաքական ղեկավարներ եւ քաղաքացիներ թշնամու բանտերում, ապագայի հույս փնտրող, իրենց հանապազօրյա հացի համար պայքարող ու հայրենիքի կարոտով ապրող արցախցիներ: Գրեթե ամեն օր տեղահանված արցախցիները Հայաստանի կառավարության շենքի դիմաց հավաքվում, փորձում են իրենց սննդի, կեցության կամ այլ տարրական հարցեր լուծել եւ ապագայի համար երաշխիքներ ստանալ: Հայաստանի իշխանությունները, սակայն, Արցախի հանձնումը մարտելուց հետո, այդուհետ փակված են համարում հայկական Արցախի էջը, փորձում են ոչնչացնել հայկական երկրորդ պետության հետ կապված հիշողությունները, Արցախի իշխանություններին ճնշումների միջոցով չեզոքացնում են, իսկ տեղահանված արցախցիների ստիպում են մոռանալ ինքնությունը եւ ընդունել ՀՀ քաղաքացիություն, եթե ցանկանում են գոյատևել այստեղ: Կարճ ասած՝ ամեն ինչ այնպես է, ինչպես պլանավորել է Ադրբեջանը:









ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍԱՐՑ

ԻՆՉԻ՞ ԳԻՄԱՑ ԵՆ ԿՐԴԱԿՆԵՐԸ ԵՎԻՐՎԵԼ

Գիլիջանի ոլորաններում տեղադրված եփած եգիպտացորեն վաճառքի կրպակների վրա նկարված է «Գրին ռոջ մենջ-մենթ գրուպ» ընկերության նշանը...

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՅԱՆ Տալուշ

ԹՎԵՐ

Ո՞Ր ԵՐԿՐՆԵՐԻՑ ԵՆ ԱՄԵՆԱՇԱՏԸ ԱՅՑԵԼԵԼ ՀՀ

2024 թ. հունվար-հուլիս ամիսների կտրվածքով ամփոփվել են հիմնական ժողովրդագրական ցուցանիշները:

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, որ 2024 թվականի հունվար-հուլիս ամիսներին ՀՀ սահմանային մուտքերի-ելքերի գրանցումները, ըստ սահմանահատողի քաղաքացիության երկրի, որքան են եղել:

Այսպիսով՝ ներկայացնում ենք թոփի 10 երկրները, որտեղից մուտք եւ ելք են արել Հայաստան:

Ուկրաինայի քաղաքացիները Հայաստան է գործել 1 093 428 մարդ, իսկ Հայաստանից դուրս է եկել 1 131 213 մարդ, ինչն ավելին է, քան մուտք գործելու թիվը:

Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան մուտք է գործել 796 181 մարդ, իսկ Հայաստանից դուրս է եկել 747 777 մարդ: Հիշեցնենք, որ Ռուսաստանի Դաշնությունից դեպի Հայաստան այն ժամանակ սկսեցին շատ այցելել, երբ սկսվեց ռուս-ուկրաինական պատերազմը:

Կրասնայի դեպի Հայաստան է եկել 226 791 մարդ, իսկ դուրս է եկել 222 612:

Իրանի Իսլամական Հանրապետությունից դեպի Հայաստան է եկել 108 834 մարդ, դուրս է եկել 107 665 մարդ:

ԱՄՆ-ից 42 860 մարդ եկել է ՀՀ, իսկ գնացել՝ 36 438 մարդ:

Ուկրաինայից Հայաստան է եկել 32 277 մարդ, դուրս է եկել 32 564 մարդ:

Հնդկաստանից Հայաստան է մուտք գործել 29 134 մարդ, իսկ դուրս է եկել 34 772 մարդ:

Ֆրանսիայից ՀՀ է եկել 19 768 մարդ, իսկ գնացել է 17 239-ը:

Չինաստանից 19 512 մարդ եկել է Հայաստան, եւ գնացել է 18 680 մարդ:

Գերմանիայից 17 826 մարդ եկել է Հայաստան, իսկ 16 542 մարդ գնացել է:



Սեր ներկայացրած շարքից վերջին երկիրը Ֆիլիպիններն է, որտեղից 14 475 մարդ եկել է Հայաստան, իսկ գնացել է 14 756 մարդ:

Կից ներկայացնում ենք նաեւ ՀՀ պետական սահմանի անցման կետերով իրականացված ժամանումներն ու մեկնումները:

«Զվարթնոս» օդանավակայան մուտք է գործել 1 379 644 մարդ, որից 439 098-ը ՀՀ փաստաթղթով, իսկ դուրս է եկել 1 358 143 մարդ, որից 456 051-ը՝ ՀՀ փաստաթղթով:

Բազրատաշենի անցակետով մուտք է գործել 703 735 մարդ, որից 420 993-ը ՀՀ

փաստաթղթով, իսկ դուրս է եկել 697 913 մարդ, որից 434 531-ը՝ ՀՀ փաստաթղթով:

Բավրայի անցակետից 219 581 մարդ մուտք է գործել, որից 72 424-ը ՀՀ փաստաթղթով, իսկ դուրս է եկել 219 671 մարդ, որից 74 378-ը ՀՀ փաստաթղթով:

Մեղրիի անցակետից մուտք է գործել 181 085 մարդ, որից 117 128-ը ՀՀ փաստաթղթով:

Գյումրու օդանավակայանից 29 831 մարդ մուտք է գործել, որից 11 610-ը՝ ՀՀ փաստաթղթով, եւ 30 259 հոգի դուրս է եկել, որից 14 215-ը՝ ՀՀ փաստաթղթով:

ԱՆՆԱ ՍՐԱՊՈՒՆՅԱՆ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿՅԱՆՔԻ ՄԻՋԻՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

2024 թ. հունվար-հուլիս ամիսների կտրվածքով ամփոփվել են հիմնական ժողովրդագրական ցուցանիշները:


«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, որ 2023 թվականին ՀՀ-ում ամբողջ բնակչության հաշվով կյանքի միջին տևողությունը կազմել է 77 տարեկանը, կանանց դեպքում՝ 81 տարեկանը, տղամարդկանց դեպքում՝ 74 տարեկանը: Ստացվում է, որ ամբողջ ՀՀ-ում կանայք ավելի երկարակյաց են, քան տղամարդիկ:

ՀՀ քաղաքային բնակչության կյանքի միջին տևողությունը կազմում է 77 տարեկանը, կանանց դեպքում՝ 81 տարեկանը, իսկ տղամարդկանց շրջանում՝ 73 տարեկանը:

ՀՀ գյուղային բնակչության կյանքի միջին տևողությունը կազմում է կրկին 77 տարեկանը, կանանց դեպքում՝ 80 տարեկանը, իսկ տղամարդկանց՝ 74 տարեկանը:

Կից նաեւ ներկայացնում ենք, թե հունվար-հուլիս ամիսներին որոնք են ՀՀ-ում մահացության պատճառները՝ ըստ մահվան հիմնական պատճառների:

Մահվան հիմնական պատճառներից առաջատարը արյան շրջանառության



համակարգի հիվանդություններն են, այս տարի դրանցից մահացության դեպքերը կազմել են 8 151, իսկ նախորդ տարի՝ 7 647 դեպք: Եթե համեմատենք 2024 թվականի եւ 2023 թվականի նույն ժամանակահատվածի տվյալները, ապա կտեսնենք, որ այս տարի մահացության թվերը այս հիվանդությունից գրեթե 1000-ով աճել են:

Երկրորդ հիվանդությունը, որից գրանցվել են մահվան շատ դեպքեր, նորագոյացություններն են (քաղցկեղ), որից այս

տարի մահացության դեպքերը կազմել են 3 039, իսկ նախորդ տարի՝ 2 968 դեպք:

Շնչառական օրգանների հիվանդություններից մահացության ցուցանիշները եւս շատ են, որոնք այս տարի կազմում են 1 425, իսկ նախորդ տարի՝ 1 290 դեպք:

Ա. ՍՐԱՊՈՒՆՅԱՆ

«ԳՅՈՒՂԱՅՈՒ ԱՊՐԱՆՔԸ ՄԻՇՏ ԷԼ ԸՍՏ ԷԺԱՆ Է ԵՂԵԼ»

Երեւան-Արմավիր ավտոմայրուղում գտնվող բանջարեղենի շուկայում կարտոֆիլի կիրգրամը 120-130 դրամ է, գնորդները նշում են՝ նախորդ տարիների համեմատ հիմա ավելի մատչելի է:

Շուկայի վաճառողները «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում պատմում են՝ խանութայինները շուկայից էժան ապրանք գնում են եւ իրենց խանութներում կրկնակի թանկ վաճառում:

Բացօթյա այս տոնավաճառից օգտվող գյուղի բնակիչներն էլ ասում են՝ իրենք հիմնականում շուկաներից են գնում ներկատարում, քանի որ այստեղ գներն ավելի մատչելի են:

«Գյուղացու ապրանքը միշտ էլ շատ էժան է եղել», - լրագրողի հետ զրույցում ասել է գյուղացիներից մեկը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՍՈՒՆԵՂՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 9 պատահար, 17 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:







Էջը՝ ԱԼԿԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ**

**ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ ինչ է միանվագ վճարը: Ինչի՞ հիման վրա է վճարվում այն: Համլետ Պետրոսյան (66 տարեկան)**



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հ. Պետրոսյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ միանվագ վճարը կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո անձի կենսաթոշակային հաշվում առկա միջոցներն ամբողջապես մասնակցին միանգամից վճարելն է:

Եթե մասնակցի՝ կուտակային միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը փոքր է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից կամ հավասար է դրան, ապա մասնակցին իրավունք ունի կուտակած միջոցները ստանալ միանվագ վճարների ձևով: Բացի դրանից, եթե մասնակցի՝ կուտակային միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը գերազանցում է հիմնական կենսաթոշակի հնգապատիկը, ապա մասնակցը պարտավոր է կնքել հիմնական կենսաթոշակի հնգապատիկն ապահովող անուիտետի պայմանագիր, իսկ մնացած մասը նա իրավունք ունի ստանալ միանվագ վճարի տեսքով:

Բացի վերը նշվածը՝ կենսաթոշակային հաշվում առկա միջոցները միանվագ վճարի ձևով վճարվում են նաեւ՝

1. մասնակցի՝ նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու դեպքում,

2. մասնակցի՝ ծայրահեղ ծանր վիճակում գտնվելու եւ կենսական կարելու օրգանների անբուժելի ախտահարումով հիվանդ լինելու դեպքում:

**Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն**

**«ԺՈՂՎՈՒՐԳ».** Նպաստը նշանակելու եւ վճարելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում նպաստի՝ ուղղակի վճարվող գումարը գրանցվում է հաջորդ ամսվա վճարման ցուցակներում:

**ՎՃԱՐՆԵՐ**

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ եթե հասարակական կազմակերպությունը ֆիզիկական անձին կրթաթուղթ է տալիս, ապա արդյո՞ք եկամտային հարկի դա՞րձաբեկումն առաջանում է: Սուսաննա Վարդանյան (53 տարեկան)**



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Տեղեկացնում ենք, որ համաձայն «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 18 կետի՝ նվազեցվող եկամուտներ են համարվում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ասպիրանտներին, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին, հոգեւոր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին պետության կողմից վճարված, ինչպես նաեւ այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակվում են այդ ուսումնական հաստատությունները կամ նշված հոդվածի 1-ին մասի 14-րդ եւ 15-րդ կետերում նշված կազմակերպությունները:

Այսինքն՝ հասարակական կազմակերպության կողմից ֆիզիկական անձին նշանակված կրթաթոշակը նվազեցվող եկամուտ է հանդիսանում, եւ եկամտային հարկի պարտավորություն չի առաջանում:

**Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե**

**«ԺՈՂՎՈՒՐԳ».** Ավելացնենք, որ հարկային գործակալները պարտավոր են ֆիզիկական անձանց պահանջով նրանց տրամադրել հաշվարկված եւ վճարված եկամուտների, պահված հարկի գումարների վճարումների մասին տեղեկանքներ:

**ԼՈՒՐ ԿԱԴՐ**

Լուսանկարը՝ համացանցից



Սեպտեմբերի 21-ին Խաչիկ գյուղում այսպիսի մեծ գաթայով տոնելու են ավանդույթ դարձած Գաթայի փառատոնը: այն ավանդաբար նշվում է սեպտեմբերի 3-րդ շաբաթ օրը եւ այս տարի համընկել է Հայաստանի անկախության օրվա հետ:

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Մեր թերթը  
Բաժանորդագրվելու  
համար կարող եք դիմել



**«Հայկիստ» ՊՓԲԸ**  
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**  
հեռ. 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ:**

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդախտաբար ձեր բարձրագույն բոլոր խնդիրներին:

**ԱՌԱՋԱՐԿ**  
**հայկական տպագիր մամուլից**

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ \_\_\_\_\_

Ազգանուն՝ \_\_\_\_\_

Առաքման հասցե՝ \_\_\_\_\_

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ \_\_\_\_\_

Հեռ.՝ (060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

**ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**



|   |                       |                      |   |                       |                      |
|---|-----------------------|----------------------|---|-----------------------|----------------------|
| ☾ | Շիրակ                 | +8 + 11<br>+24 + 29  | ☾ | Արարատ                | +17 + 20<br>+33 + 35 |
| ☾ | Կոտայքի լեռներ        | +8 + 11<br>+25 + 29  | ☾ | Արմավիր               | +15 + 18<br>+33 + 35 |
| ☾ | Կոտայքի նախալեռներ    | +16 + 18<br>+29 + 30 | ☾ | Վայոց ձորի լեռներ     | +9 + 11<br>+25 + 27  |
| ☾ | Գեղարքունիք           | +9 + 11<br>+23 + 28  | ☾ | Վայոց ձորի նախալեռներ | +17 + 20<br>+32 + 35 |
| ☾ | Լոռի                  | +9 + 14<br>+23 + 27  | ☾ | Սյունիքի հովիտներ     | +17 + 21<br>+33 + 35 |
| ☾ | Տավուշ                | +12 + 17<br>+27 + 30 | ☾ | Սյունիքի նախալեռներ   | +14 + 17<br>+29 + 32 |
| ☾ | Արագածոտնի լեռներ     | +9 + 12<br>+23 + 27  | ☾ | ԼՂՀ                   | +13 + 16<br>+27 + 31 |
| ☾ | Արագածոտնի նախալեռներ | +15 + 18<br>+27 + 31 | ☾ | Երեւան                | +24 + 26<br>+30 + 32 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ  
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23  
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03U089086  
տրված է 24.11.2010  
Ստորագրված է տպագրության 18.9.2024  
Տպաքանակ՝ 3968

Գլխավոր խմբագիր՝  
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում  
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը: «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: